



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա
Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր
հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկա՝

Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝

Համեստ Աբրահամյան

Ուսումնական

հաստատություն՝

Արևաբույրի

միջնակարգ դպրոց

2023թ.

ԹԵՄԱ՝

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

ՉԱՐՑ՝

Որոնք են բնապահպանական հիմնական խնդիրները, որքանով են դրանք ճիշտ ընկալվում դպրոցական երեխաների կողմից և ինչպես է իրականացվում կրթությունն ու դաստիարակությունը դպրոցում:

Կատարող՝ Չամեստ Աբրահամյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3. Ներածություն
4. Բնապահպանական խնդիրներ
5. Բնապահպանական կրթություն և դաստիարակություն
10. Փաստեր բնապահպանության մասին
15. Եզրակացություն
16. Օգտագործված գրականության ցանկ

1. Ներածություն

Ամեն ինչ փոխկապակցված է ամեն ինչի հետ,- ասում է առաջին բնապահպանական օրենքը: Սա նշանակում է, որ քայլ անգամ հնարավոր չէ անել առանց շրջակա միջավայրի ներդաշնակությունը խախտելու, փոփոխելու, իսկ որ ցավալին է՝ շատ անգամ լուրջ վնասելու: Մինչև մարդու հայտնվելը և բնության հետ նրա ակտիվ հարաբերությունները, կենդանի աշխարհում գերիշխում էին փոխադարձ ներդաշնակ կախվածությունն ու կապվածությունը, կարելի է ասել, որ գոյություն ունեւ բնապահպանական ներդաշնակություն: Մարդու գալուստով սկսվում է բնապահպանական ներդաշնակության, ներդաշնակ հավասարակշռության խախտման գործընթացը: Այս գործընթացը սկսվել է 40 հազար տարի առաջ, երբ մարդու նախահայրը ձեռք է բերել մտածելու կարողություն, սկսել է գործիքներ պատրաստել, օգտագործել գիտելիքները և իր գոյության համար և ավելի հարմարավետ ապրելու համար կենսագործունեության միջոցներ արտադրել: Վաղ պատմական դարաշրջաններում մարդկային պոպուլյացիաների փոքր քանակի պատճառով բնության նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունքը դեռևս չի հանգեցրել բնական միջավայրի լայնածավալ խախտումների: Երբ մարդիկ լքում էին այն վայրերը, որտեղ իրենց գործունեության հետևանքով վնասվում էր բնական միջավայրը, այնտեղ նորից տեղի էր ունենում բնության արագ վերականգնում: Մեր օրերում արդեն բնության, Էկոհամակարգի պահպանումը դարձել է մարդկության համար լրջագույն, եթե ոչ կարևորագույն և համար առաջին խնդիրը: Արտադրական ուժերի զարգացմամբ, որոնք հնարավորություն են տալիս լայնածավալ տիրապետել բնությանը և Երկրի վրա բնակչության թվի աճմամբ բնական միջավայրի դեգրադացումը հասնում է աննախադեպ չափերի, որոնք վտանգավոր են հենց մարդկության գոյության համար, ուստի. որ միանգամայն արդարացված է խոսել բնապահպանական ճգնաժամի մասին, որը կարող է վերածվել բնապահպանական աղետի: Բնապահպանական

խնդիրները, որոնք արտահայտվում են մարդու բնապահպանական միջավայրում պայմանների և ազդեցությունների հավասարակշռության խախտմամբ, առաջացել են բնության նկատմամբ մարդու շահագործողական վերաբերմունքի, տեխնոլոգիաների արագ աճի, ինդուստրացման ծավալների և բնակչության աճի հետևանքով: Այսօր բնապահպանական հավասարակշռության խախտումն արտահայտվում է բազմաթիվ ձևերով: Կարելի է ասել, որ կա կոնսենսուս, որ հիմնական ձևերն են. չվերականգնվող բնական ռեսուրսների (հումքի և էներգիայի աղբյուրների) իռացիոնալ շահագործումը, որն ուղեկցվում է արագ սպառվելու վտանգով. կենսոլորտի աղտոտումը վտանգավոր թափոններով. տնտեսական օբյեկտների և ուրբանիզացիայի մեծ կենտրոնացում, բնական լանդշաֆտների աղքատացում և հանգստի և բուժման ազատ տարածքների կրճատում: Բնապահպանական ճգնաժամի արտահայտման այս ձևերի հիմնական պատճառներն են արագ տնտեսական աճը և հարկադիր ինդուստրացումը, որը հանգեցնում է ուրբանիզացիայի: Ժամանակակից աշխարհում բնապահպանական հավասարակշռության խախտումն այնպիսի չափեր է ստացել, որ տեղի է ունեցել կյանքի համար անհրաժեշտ բնական համակարգերի և մարդկության արդյունաբերական, տեխնոլոգիական և ժողովրդագրական կարիքների հավասարակշռության խախտում: Այս ամենը ենթադրում է շրջակա միջավայրի դեգրադացիա՝ մարդկանց կողմից չարաշահումների հետևանքով: Առաջացած բնապահպանական խնդիրները պահանջում են լրջագույն լուծումներ, երեխաների ճիշտ, գրագետ դաստիարակություն արդեն իսկ փոքր տարիքից և ընդհանրապես սրտացավ ու պատասխանատու վերաբերմունք բնության, ընդերքի ու շրջակա միջավայրի նկատմամբ բոլորի կողմից:

Բնապահպանական խնդիրներ

Բնապահպանական խնդիրը դա բնական միջավայրի փոփոխությունն է մարդածին գործոնների արդյունքում, որը հանգեցնում է բնության կառուցվածքի և ֆունկցիայի խախտմանը:

Բնապահպանական հիմնական խնդիրներն են՝

- Կլիմայի փոփոխություն, մթնոլորտի, օդի և ջրի աղտոտվածություն
- Ընդերքի օգտագործում
- Թթվային անձրև և անտառահատումներ
- Հողի դեգրադացիա և աղտոտում
- Թափոնների կառավարման և վերամշակման բացակայություն

- Պլաստմասսա և մեկանգամյա օգտագործման իրերովաղտոտում
- կոմպլեքսային (լանդշաֆտային) անապատացում, կենսաբազմազանության նվազում

Բնապահպանական խնդիրներ, որոնք արտահայտվում են մարդու բնապահպանական միջավայրում պայմանների և ազդեցությունների հավասարակշռության խախտմամբ, առաջացել են բնության նկատմամբ մարդու շահագործողական վերաբերմունքի, տեխնոլոգիաների արագ աճի, ինդուստրացման ծավալների և բնակչության աճի արդյունքում: Բնական ռեսուրսների զարգացումն այնքան մեծ է, որ հարց է ծագել ապագայում դրանց օգտագործման մասին: Բնական միջավայրի աղտոտվածությունն արտահայտվում է աճող սմոգով, մեռած լճերով, խմելու անհնարին ջրով, մահացու ճառագայթմամբ և կենսաբանական տեսակների ոչնչացմամբ: Բնական միջավայրի խախտումը կախված է ինչպես բնակչության թվաքանակից ու կենտրոնացվածությունից, այնպես էլ արտադրության ու սպառման ծավալից: Մարդիկ անցած դարի ընթացքում թույլ են տվել չափազանց մեծ քանակությամբ թափոնների, կողմնակի արտադրանքների և քիմիական նյութերի արտադրությունն ու բաշխումը: Աղտոտվածությունը մեծապես վնասում է մեր մոլորակի կյանքին, հենց մարդկությանը: Մենք աղտոտում ենք օդն ու ջուրը, ապրում ենք այնպիսի աղմուկի ու փոշու մեջ, որ ոչ մի կենդանի արարած չի դիմանա: Բնապահպանական խնդիրների հիմնական դասակարգումը կարելի է կատարել նաև այլ չափանիշների հիման վրա`

- Ըստ բարդության
 - պարզ
 - բարդ
 - շատ բարդ
- Ըստ լուծման հնարավորության
 - լուծելի
 - դժվարլուծելի
 - գրեթեանլուծելի
- Ըստ տարածաշրջանների տարածական գրավման
 - լոկալ
 - ռեգիոնալ
 - գլոբալ

- Ըստ ժամանակահատվածի
 - կարճատև
 - երկարատև
 - գրեթեչանհետացող

Բնապահպանական կրթություն և դաստիարակություն

Բնապահպանական կրթությունը և դաստիարակությունը հասարակության առջև կանգնած գլխավոր խնդիրներից մեկն է: Բնապահպանական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական բնապահպանական գիտելիքներով և նոր բնապահպանական մտածողությամբ: Դպրոցում այն կարելի է կազմակերպել ակտիվ ուսուցման մեթոդներով: Դասի կազմակերպման հիմնական ձևը տեսական և գործնական պարապմունքներն են: Ուսուցման ձևերից են միջոցառումները, արշավների կազմակերպումները բնության մեջ, ուսումնական ճամփորդությունները հիդրոէլեկտրոկայաններ, ջերմակայաններ, արգելավայրեր և արգելոցներ: Կարելի է կազմակերպել ծառատունկ, թղթի թափոնների հավաքում տարածքի կարգի բերում, ծառերի խնամք:

Բնապահպանական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված ազգին և ազգաբնակչությանը բնապահպանական գիտելիքների ուսուցմանը, բնապահպանական դաստիարակությանը, բնապահպանական կուլտուրայի արմատավորմանը, բնապահպանական և բնօգտագործման բնագավառում նրանց ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը: Բնապահպանական սխալներ չանելու համար ժամանակակից մարդը պետք է զինված լինի տարրական բնապահպանական գիտելիքներով և նոր բնապահպանական մտածողությամբ:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք Էկոլոգիապես գրագետ և բարեխիղճ մարդ :

Բնապահպանական կրթության հիմնական խնդիրներն են՝

1. Երեխայի մոտ բնապահպանական գիտակցության ձևավորումը:

2. Գործնական հմտությունների զարգացում բնության տարատեսակ գործունեության մեջ (այդ գործունեությունը պետք է կրի բնապահպանական բնույթ): Այդ գործունեության ընթացքում երեխաները սովորում են ստեղծել կենդանական և բուսական աշխարհի համար համապատասխան բարենպաստ պայմաններ: Կարևոր է համարվում նաև, որ երեխան սովորի կանխատեսել վնասակար գործունեության հետևանքները, ինչպես ճիշտ վարվել բնության մեջ, պահպանել առանձին կենդանի օրգանիզմների և համակարգերի գոյությունը:
3. Մանկավարժը պետք է կարողանա արթնացնել երեխաների մոտ կարեկցանքի, սիրո, հոգատարության, ինչպես նաև ուրախության և հիացմունքի զգացողություններ բնության հետ առնչվելիս: Ոչ պակաս կարևոր է նաև սովորեցնել երեխային գնահատել իր սեփական, իր հասակակիցների, մեծերի արարքների վերաբերյալ գնահատման ունակությունը:

Բնապահպանական մշակույթի կարևոր մաս է կազմում երեխաների կողմից կենդանի և անկենդան աշխարհի միասնության և փոխկապվածության գաղափարի ընկալումը: Անկենդան բնությունը ներկայանում է որպես կենդանի օրգանիզմների պահանջների բավարարման աղբյուր: Օրինակ՝ կենդանի և անկենդան աշխարհի կապը արտահայտվում է նաև տարբեր օրգանիզմների հարմարեցման մեխանիզմի միջոցով (ձկները ապրում են ջրի տակ: Նրանց բնակության միջավայրը ջուրն է, ինչը նաև պայմանավորված է ձկների կառուցվածքով և կյանքի պայմաններով):

Բնապահպանական դաստիարակության նորագույն ձևերից են բնապահպանական միջոցառումները, գործնական աշխատանքները: Բնապահպանական

դաստիարակությունը նաեւ մարդու եւ բնության փոխներգործության մի քանի կողմերի նախնական տարրերի ընկալումն է.

1. Մարդը, որպես կենդանի էակ, որոշակի անհրաժեշտ կենսական պայմանների կարիք ունեցող արարած,
3. Մարդը, որպես բնությունը պահպանող,
4. Մարդը, որպես իր հնարավորությունների սահմաններում՝ բնության վերականգնող:

Բնապահպանական կրթության և դաստիարակության տարբեր միջոցների և ձևերի կիրառման արդյունքում իրականացվում են դպրոցականների կոլեկտիվում աշխատելու հմտությունները, հարստանում է սոցիալական փորձը, որի նպատակն է

Նախապատրաստել նրանց հասարակություն մեջ ակտիվ կյանքի, և անձնային որակների դրսևորմանը: Ուստի հենց տարրական դպրոցում պետք է դրվի բնապահպանական դաստիարակության հիմքը, որը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում: Մեր հետազոտության նպատակն է դպրոցում Բնապահպանական կրթության բովանդակության ուսումնասիրությունն ու բնապահպանական դաստիարակության իրականացման արդյունավետ ձևերի մշակումն է: Հետազոտության խնդիրներն են՝ 1. Վերլուծել հիմնախնդրի շուրջ առկա մանկավարժահոգեբանական գրականությունը: 2. Բացահայտել դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության առկա վիճակը: 3. Մշակել դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության արդյունավետ ձևեր: Բացի դպրոցից բնապահպանական դաստիարակություն իրականացվում է բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբակներում: Բնապահպանական դաստիարակության և կրթության մեջ առանձնակի կարևորվում է բարոյական տեսանկյունը, որը իրենից ներկայացնում է պատշաճ վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ: Երեխաների բնապահպանական կրթությունն իրականացվում է երեքփոխկապակցված գործընթացների՝ կրթության, դաստիարակության և զարգացման միջոցով, այն ուղղված է անձի բնապահպանական մշակույթի զարգացմանը, մարդկային փոխազդեցության և հոգևոր փորձի հարստացմանը՝ ապահովելով դրա գոյատևումը և զարգացումը : Դիտարկենք երեք փոխկապակցված գործընթացների էությունը: Բնապահպանական կրթությունը ենթադրում է՝ փոխկապակցված բնական երևույթների, օրինաչափությունների, կենդանի ու անկենդան բնության միասնության, մարդու, հասարակության և բնության մասին ունեցած գիտելիքների ձևավորում. Բնապահպանական հիմնախնդիրների լուծում, մտավոր, բնապահպանական, շրջակա միջավայրի գնահատման, բարելավման, կարողությունների և գործնական ունակությունների զարգացում, բնապահպանական արժեքային կողմնորոշումների ձևավորում: Այսինքն՝ բնապահպանական կրթությունն ենթադրում է կոլոգիական գիտակցության ձևավորում: 2. Բնապահպանական դաստիարակությունը ենթադրում է՝ բնապահպանական աշխարհայացքի, էկոլոգիապես արդյունավետ վարքի, գործունեության պահանջմունքի, սովորույթի, բնական և սոցիալ-մշակութային

միջավայրի, կյանքի, առողջության նկատմամբ պատշաճ վերաբերմունքի բնապահպանական խնդիրների և հարցերի մասին գեղագիտական, բարոյական, դաստիարակություններ կատարելու կարողության ձևավորում, շրջակա միջավայրի պահպանության ակտիվ գործունեության ձգտում: Այսինքն՝ մարդու մոտ բնության նկատմամբ պատշաճ վերաբերմունք կարելի է ձևավորել բնապահպանական կրթության և դաստիարակության միջոցով: Բնապահպանական զարգացումը ենթադրում է բնաճանաչողական, բնապահպանական, բնական պաշարների խնայողական օգտագործման վերաբերյալ գիտելիքների, կարողությունների, արժեհամակարգի քանակական և որակական դրական փոփոխություններ, որն արտահայտվում է, շրջակա միջավայրի պահպանման, գործնական աշխատանքներին անձամբ մասնակցելու ցանկությամբ:

Դպրոցականների բնապահպանական կրթության և դաստիարակության հիմնական նպատակը նրանց մոտ բնապահպանական գիտակցություն ձևավորելն է, սովորողների անհատական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, շրջակա միջավայրի վիճակի նկատմամբ անձնական պատասխանատվության զգացումի դաստիարակումը: Բնապահպանական դաստիարակության ռազմավարական նպատակը Էկոլոգիապես կրթված ու դաստիարակված անձի ձևավորումն է, որն օժտված է բնապահպանական գիտակցությամբ, բնապահպանական մտածողությամբ և աշխարհայացքով, բնապահպանական մշակույթով և վարքով, բնապահպանական արժեքային կողմնորոշումների համակարգով և պատասխանատվության զգացումով: Բնապահպանական կրթության նպատակն է շրջակա միջավայրի նկատմամբ ձևավորել պատասխանատու վերաբերմունք, որը կառուցված է բնապահպանական իրազեկության հիման վրա: Ժամանակակից բնապահպանությունը համարվում է կիրառական համալիր գիտություն: Բնապահպանական դաստիարակությունը ենթադրում է բնապահպանական գիտելիքների կուռ համակարգի յուրացում, բնապահպանական արժեքների փոխանցում սովորողների Էկոկոնկրետ գիտակցության և վարքագծի ձևավորում: Բնապահպանական դաստիարակության հիմքում ընկած է բնապահպանական հասկացությունների, գիտելքների, արժեքների, պրակտիկ փորձի յուրացումը: Բնապահպանական կրթությունը որպես սովորողի բնապահպանական դաստիարակության հիմնական միջոց, նպաստում է տարրական դպրոցում սովորող

աշակերտի բնաճանաչողական ընդունակությունների զարգացմանը, բնության նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը: Բնապահպանական կրթության և դաստիարակության արդյունավետ կազմակերպման համար առավել արդյունավետ և կիրառական են հետևյալ մեթոդները՝ զրույց, բանավեճ, պատմում, ինտերակտիվ քննարկումներ, ինքնուրույն աշխատանքներ, բնապահպանական ուղղվածության առաջադրանքներ, բնապահպանական իրավիճակների մոդելավորումներ, դերային խաղեր, ուսումնասիտագրտական նախագծեր: Գործնականորեն օգտակար, արդյունավետ են ցուցադրական մեթոդները, ինչպես նաև վեբ տեխնոլոգիաների նպատակային կիրառումը: Բնապահպանական դաստիարակության առավել արդյունավետ մեթոդ է բանավեճը: Բանավեճի թեմայի ընտրության ժամանակ հաշվի է առնվում կրտսեր դպրոցականի բնապահպանական գիտելիքների յուրացվածության մակարդակը, ակտիվությունը, դրդապատճառների ձևավորվածությունը: Բանավեճի հիմնական նպատակը նպասել սովորողների ինքնուրույնության, ճանաչողական հետաքրքրությունների, և էկոլոգիապես անվտանգ պրակտիկ գործունեության խթանմանը: Բնապահպանական բովանդակությամբ խաղի պլանավորումը ենթադրում է՝ որոշակի իրավիճակում բնապահպանական և բնօգտագործման փորձի յուրացումը: Խաղը ընդգրկում է մի քանի փուլեր՝ նպատակադրում, պլանավորում, իրականացում արդյունքների վերլուծություն: Խաղը ուղղված է բնապահպանական տարբեր խնդիրների քննարկմանը՝ փոխներգործության ու երկխոսության պայմաններում: Բնապահպանական խաղը նպաստում է բնապահպանական գիտելիքների ամրապնդմանը և ձևավորմանը, բնապահպանական, ազգային, մշակութային արժեքների ինտեգրմանը: Բնապահպանական կրթության և դաստիարակության ընթացքում ուսուցիչը պետք է հասկանա տվյալ իրադրության ժամանակ մեթոդների արդյունավետ համադրման անհրաժեշտությունը: Բնապահպանական բովանդակությամբ նյութերի յուրացման համար նպատակահարմար է կիրառել ուսուցման տարբեր մեթոդների համատեղում, որի նպատակը խմբային քննարկումների, դերային խաղերի, միջոցով հասնել հաղորդվող նյութի հիմքային ընկալմանը, գիտելիքների ձևավորմանը, կարողությունների և հմտությունների զարգացմանը կիրառելով աշակերտակենտրոն ուսուցում: Բնապահպանական կրթության վերաբերյալ բոլոր աշխատանքներն իրականացվում են երկու ուղղությամբ՝ դասարանում և առօրյա կյանքում: Դասարանում երեխաների կողմից ձեռք բերված գիտելիքները, հմտություններն ու կարողությունները ամրապնդվում են առօրյա կյանքում:

Փաստեր բնապահպանության մասին

Երկրի մակերևույթի մոտ 12%-ն ունի արգելոցի կարգավիճակ: Չինաստանի բնակչության կեսը խմում է աղտոտված ջուր, որի մեջ վնասակար նյութերի տոկոսը շատ ավելի բարձր է նորմայից: Արտադրված նավթի մոտավորապես մեկ միլիոներորդ մասը թափվում է սարսափելի աղտոտելով շրջակա միջավայրը: Խաղաղ օվկիանոսում կա մի հսկայական աղբարկղ. հոսանքները մարդկանց կողմից դուրս նետված ամբողջ աղբը տանում են որոշակի կետ: Նրա տարածքը հասնում է 1,5 միլիոն քառակուսի կիլոմետրի: Շվեդիան ներկրում է թափոններ այլ երկրներից, վերամշակում և վերաօգտագործում դրանք: Շրջակա միջավայրի նկատմամբ տեղական ավանդական մտահոգությունը վաղուց ապահովել է տեղական աղբի վերամշակումը ծավալի գրեթե 100%-ով: Շվեդիայում և Իսլանդիայում դիակիզարանների թափոնները օգտագործվում են տները տաքացնելու համար: Որոշ երկրներում պահպանության կազմակերպությունները բռնում են փղերին և կտրում նրանց ժանիքները՝ այս կենդանիներին որսագողերից պաշտպանելու համար: Շատ երկրներ ակտիվորեն կորցնում են իրենց անտառները վատթարացող Էկոլոգիայի և բարբարոսական անտառահատումների պատճառով: Անտառահատումների ամենաարագ տեմպը պատկանում է Մալայզիային և Մեծ Բրիտանիային: Չինաստանում ամեն տարի մի քանի հազար քառակուսի կիլոմետր տարածք վերածվում է անապատի: Բնապահպանական այս խնդիրը ինտենսիվ հողագործության հետևանք է: Շրջակա միջավայրի վրա ամենամեծ բեռը հենց մարդիկ են ստեղծում, որոնց թիվը 4 օրը մեկ՝ մեկ միլիոնով ավելանում է: Աշխարհի ամենամաքուր միջավայրն ունեցող տարածաշրջանը Տիբեթն է: Ամեն տարի Երկրի միջին բնակիչը սպառում է ավելի քան 600 խորանարդ մետր քաղցրահամ ջուր: Ամբողջ համաշխարհային առևտրի մոտ 90%-ը բաժին է ընկնում ծովային ուղիներին, ինչն անուղղելի վնաս է հասցնում օվկիանոսների Էկոլոգիային: Բնության համար վնասակար են ոչ միայն պոլիէթիլենային տոպրակները, այլև թղթերը: Ճիշտ է դրանք ավելի արագ են քայքայվում, բայց դրա հետ մեկտեղ անտառները հատվում են դրանց արտադրության համար, իսկ արտադրական գործընթացն ինքնին զգալիորեն աղտոտում է շրջակա միջավայրը: Վատ Էկոլոգիան նպաստում է տարբեր հիվանդությունների զարգացմանը, և, որոշ գիտնականների կարծիքով, աշխարհում մահացությունների մոտ 15%-ը կարող է կապված լինել օդի աղտոտվածության հետ: Չինաստանի մայրաքաղաք Պեկինը անհավանական կեղտոտ օդով քաղաք է, որը զբաղեցնում է այս հակավարկանիշի առաջին տասնյակի տեղերից մեկը: Ամեն տարի շուրջ

9 միլիարդ տոննա աղբ է թափվում օվկիանոս:Պլաստիկը, որից պատրաստվում են շշերը, ամբողջությամբ քայքայվում է մոտ 500 տարի անց:Աշխարհի ամենակեղտոտ լճերից մեկը Կարաչայն է, որը գտնվում է Ռուսաստանում:Հնդկական Մումբայ մետրոպոլիայում օդը չորս անգամ ավելի կեղտոտ է, քան վերը նշված Պեկինում:Գետը, որը հոսում է Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայի միջով, ամբողջովին կենսաբանորեն մեռած է: Նրա մեջ ընդհանրապես էկոլոգիա չկա, նույնիսկ միկրոօրգանիզմները չեն գոյատևում նրա ջրում:Պարզվել է, որ ծովային թռչունների գրեթե 50%-ի, կետածևերի 22%-ի և ծովային կրիաների բոլոր տեսակների մարմնում պոլիէթիլեն կա:2010 թվականին 85 միլիոն աղբ է վերամշակվել, չնայած դրան՝ աղբավայրերը շարունակում են գերլցվել թափոններով:Միջին ամերիկյան ընտանիքը տարեկան 1 տոննա աղբ է նետում:Գիտական հետազոտություններիհամաձայն՝ 8 մահերից 1-ըինչ-որ կերպ կապված է օդի աղտոտվածության հետ:Այսօր շուկայում կա մոտ 80000 սինթետիկ քիմիական նյութեր, որոնցից 500-ը մշտապես գտնվում են մարդու մարմնում:Ամերիկայում ամեն ժամ 3 միլիոն պլաստիկ շիշ դեն են նետում, իսկ պլաստիկն ունի 500 տարվա քայքայման ժամկետ:Հնդկաստանում օրական մոտ հազար երեխա է մահանում ջրի ծայրահեղ աղտոտման հետևանքով առաջացած հիվանդություններից:Ամերիկյան գետերի մոտ 40%-ը և ամերիկյան լճերի 46%-ը չափազանց աղտոտված են ձկնորսության և լողի համար:Բրիտանական աղտոտված գետերում ապրող արու ձկների կեսի սեռական օրգաններում լրիվ ձևավորված ձվեր են հայտնաբերվել:2012 թվականին մարդիկ աղբավայր են ուղարկել 50 միլիոն տոննա էլեկտրոնային թափոններ:ԱՄՆ-ում միլիոնավոր մարդիկ տառապում են քնի կորստից, սթրեսից և արյան բարձր ճնշումից՝ առաջացած աղմուկի բարձր մակարդակի պատճառով:Տեխ գետը և նրա վտակները դարձել են մահացու՝ դրանց մեջ հսկայական ճառագայթման արտանետման հետևանքով:Չինաստանը օդի աղտոտվածության ամենաբարձր մակարդակ ունեցող երկրների ցանկում է: Արդյունաբերական թափոնների 80%-ը լցվում է Գանգես գետը, և տեղի բնակիչներն այն վերածել են մահացած հարազատների գերեզմանոցի:Այսօր աշխարհում կա մոտ 500 միլիարդ ավտոմեքենա, դրանց արտանետվող գազերը արտադրում են ավելի քան 200 վնասակար նյութեր:Ամեն տարի օվկիանոս է նետվում 6 միլիարդ կիլոգրամ աղբ, որի մեծ մասը պլաստիկ է:Խաղաղ օվկիանոսի տարածքում նույնիսկ «մայրցամաք» գոյություն ունի, որն իրենից ամբողջովին պլաստիկ արտանետված շշերից կազմված աղպակույտ է ներկայացնում:Որոշ հաշվարկների համաձայն՝ աղբակույտի չափերը հասնում են ԱՄՆ-ի ողջ տարածքի կրկնապատիկ

չափին:

Ամեն օր աշխարհում մոտ 5000 մարդ մահանում է չիամելու ջրի օգտագործման պատճառով: Ամեն տարի ամերիկացիները գնում են մոտ 29 միլիոն ջրի պլաստիկ շիշ և դրանց միայն 13%-ն է վերամշակվում: Աղտոտվածությունը տարեկան սպանում է մեկ միլիոն ծովային թռչուններ և 100 միլիոն կաթնասուններ: Երեխաները և տարեցները չափազանց զգայուն են օդոսի չափազանց բարձր կոնցենտրացիաների նկատմամբ: Սա վնասում է մեր շնչառական համակարգը և կարող է թոքերի քաղցկեղ առաջացնել նույնիսկ չծխողների մոտ: Արաբական Միացյալ Էմիրությունները աշխարհում ջրի ամենամեծ սպառողն ու թափոններ արտադրողն է: Անտարկտիդան Երկրի ամենամաքուր վայրն է: Յուրաքանչյուր ամերիկացի ամեն օր թողնում է 2 կիլոգրամ թափոն: 10. 5 օրում Չինաստանից օդի աղտոտվածությունը հասնում է ԱՄՆ: Խոշոր քաղաքներում մաքուր խմելու ջրի և կոյուղու մաքրման օբյեկտների բացակայությունը կարող է հանգեցնել խոլերայի, մալարիայի և փորլուծության բռնկման: Ամեն օր 2 միլիոն տոննա թափոն է մտնում ջուրը: Ամենաշատ աղտոտված գետերի քանակը պատկանում է Ասիային: 2010 թվականին Ռուսաստանում օդի աղտոտվածության մակարդակը բարձրացել է 35%-ով: Զբոսաշրջային նավերը օվկիանոսների հիմնական աղտոտողներից են: Նրանք արտադրում են ավելի քան 200,000 գալոն կեղտաջրեր, որոնք նետվում են օվկիանոս: Մեքսիկայում տարեկան մոտ 6400 մարդ է մահանում օդի աղտոտվածությունից: Աշխարհի շուրջ 700 միլիոն մարդ խմում է աղտոտված ջուր: Յուրաքանչյուր մեքենա արտադրում է մինչև կես տոննա ածխաթթու գազ: Ամեն տարի ավելի քան 30 միլիարդ տոննա քաղաքային կոյուղաջրեր և արդյունաբերական թափոններ են նետվում օվկիանոս, լճեր և գետեր: Տիեզերական աղբը կարող է Երկիր ընկնել մի քանի տարի անց: Երբեմն այն այրվում է մթնոլորտում մինչև Երկիր հասնելը: Տիեզերական աղբի արագությունը կազմում է ժամում մոտ 17500 մղոն: Ամեն օր տիեզերական աղբի մի քանի կտոր այրվում է վերին մթնոլորտում, բայց նորերն ավելի արագ են հայտնվում, քան հները անհետանում են:

- Տիեզերական աղբը մեծ վտանգ է ներկայացնում թռիչքների համար, քանի որ նույնիսկ մեկ - երկու սանտիմետր տրամագծով բեկորը, որը շարժվում է ուղեծրով աներևակայելի արագությամբ, ունակ է ճեղքել տիեզերանավի պատը:

- Տիեզերական աղբի խնդիրն ավելի է սրվում, քանի որ աղբի մանր կտորները պակաս վտանգավոր չեն, քան մեծերը: Միևնույն ժամանակ, նրանց թիվը անընդհատ աճում է, քանի որ նրանք բախվում են միմյանց և փշրվում ավելի փոքր մասերի:
- ՆԱՍԱ-ն կարծում է, որ տիեզերական աղբի ինքնատարածման խնդիրը կարող է ամբողջությամբ փակել տիեզերական թռիչքների հնարավորությունը մարդկանց համար արդեն 21-րդ դարի 50-ականների կեսերին:
- Ուղեծիրը տիեզերական աղբից մաքրելու նախագծերից մեկն առաջարկում է օգտագործել ավտոմատ ուղեծրային տիեզերանավ, որը կկենտրոնացնի արեգակնային էներգիան և կայրի մանր բեկորները լազերի միջոցով: Մեկ ուրիշն առաջարկում է «բռնել» բեկորները՝ օգտագործելով հատուկ ցանց՝ թեթև, բարակ և գերուժեղ, ապա դրանք ուղարկել երկրային մթնոլորտ, որպեսզի այնտեղ այրվեն:
- Ներկայում Երկրի շուրջ ուղեծրում կան բոլոր չափերի մոտ 370000 բեկորներ:
- Չինաստանին, ԱՄՆ-ին և Ռուսաստանին բաժին է ընկնում տիեզերական աղբի 93%-ը, մինչդեռ մնացած աշխարհն ապահովում է միայն մնացած 7%-ը:
- Ներկայումս 1 սմ-ից մեծ տրամագծով տիեզերական աղբից պաշտպանվելու արդյունավետ միջոցներ չկան:

Եզրակացություն

Որո՞նք են բնապահպանական կրթության նպատակներն ու խնդիրները:

Բնապահպանական կրթության և դաստիարակության հիմնական նպատակը՝ կրթել բնապահպաններ, տալ բնապահպանական գիտելիքներ, սովորեցնել երեխաներին լինել ողորմած, սիրել և պաշտպանել բնությունը (հող, ջուր, օդ, բուսական աշխարհ, կենդանական աշխարհ), ուշադիր կառավարել նրա հարստությունը:

Ո՞րն է բնապահպանական կրթության կարևորությունը: Բնապահպանական կրթության վերջնական նպատակն է հանրությանը հնարավորություն ընձեռել հասկանալու մարդու և

բնության փոխազդեցության բարդ բնույթը, բոլոր երկրների՝ շրջակա միջավայրին համահունչ ձևով զարգանալու անհրաժեշտությունը: Բնապահպանական կրթության արդյունքը երեխայի բնապահպանական մշակույթն է՝ բնության և նրա բնապահպանական կողմնորոշման մասին գիտելիքները, դրանք իրական կյանքում, վարքագծի մեջ, տարբեր գործողություններում (խաղերում, աշխատանքում, տանը) օգտագործելու կարողությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Лилия Шабутдинова. Какмалень кому человеку помочь большой планете. ...
2. Герда Райдт. Мусор.
3. Андреева, Н. Д. Теория и методика обучения экологии : учебник для СПО / Н. Д. Андреева, В. П. Соломин, Т. В. Васильева ; подред. Н. Д. Андреевой. — 2-еизд.
4. Черезова, Л. Б. Теория и методика **экологического** образованиядетей:
5. Վիքիպեդիա, Ազատ հանրագիտարան
6. Ասատրյան Լ. Թ., Սարգսյան Ա. Ա. Երեխանների Էկոլոգիական կրթության տեսություն: Երևան, 2005
7. Յարուկյան Լ., Յովսեփյան Ա. Անձի Էկոլոգիական կուլտուրան: Երևան, 2006